ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԿՈՂԲԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 82
18 նոյեմբերի 2020թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ.Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ուղարկվում է Արմավիրի մարզի Կողբավան համայնքի ավագանու 18.11.2020 թվականի թիվ 05 հերթական նիստի որոշումների փաթեթը:
Առդիր 8 թերթ

Կողբավան համայնքի ղեկավար Ս.Սերոբյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11-22673-2020
27 11 2020թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

18 նոյեմբերի 2020 թ.. 0 5 նիստ

ՈՐՈՇՈՒՄ N 17

ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 05 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>
ՀայաստանիՀանրապետության օրենքի 14-րդ հոդվածի6-րդ մասով

Ավագանին որոշում է

1. Հաստատել - Կողբավան համայնքի ավագանու թիվ 05 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Ավագանու անդամներ՝

	Կողմ / 4	Դեմ / 0	Ձեռնպահ / 0
1. Գրիգորյան Էդուարդ			
2. Սերոբյան Վահրամ			
3. Սլոյան Ասադ			
4. Օզմանյան Ֆայզո			

Կողբավան համայնքի ղեկավար Ս. Սերոբյան

2020 թվական
18 նոյեմբերի
գ. Կողբավան

Հավելված 1
Արմավիրի մարզի
Կողբավան համայնքի
ավագանու թիվ 05
հերթական նիստ
որոշում թիվ 17
18 նոյեմբերի 2020թ.

1.Օրակարգի հաստատում

2. Կողբավան համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

18 նոյեմբերի 2020թ 05 Նիստ

ՈՐՈՇՈՒՄ N 18-Ն

ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի >> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով

Համայնքի ավագանին որոշում է.

1. Կողբավան համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի <<Կողբավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 35-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

Կողմ /4/ Դեմ /0/ Ձեռնպահ /0/

Վ. Սերոբյան _____ _____ _____

Է. Գրիգորյան _____ _____ _____

Ա. Սլոյան _____ _____ _____

Ֆ. Օզմանյան _____ _____ _____

Կողբական համայնքի ղեկավար Ս. Սերոբյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Կողբական
համայնքի ավագանու
2020 թվականի նոյեմբերի 18-ի
N 18-Ն որոշման

ԿՈՂԲԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Եկամուտների մասով՝

1) 1261 տողին ուղղել 2166.9 հազար դրամ
2) 1351 տողի ուղղել 320.0 հազար դրամ
3) 04.9.1 դասի 8411 հոդվածին ուղղել 2981.4 հազար դրամ

2. Ծախսերի մասով՝

1) 1351 տողից 320.0 հազար դրամն ուղղել 01.1.1 դասի 4112 հոդվածին
2) 1261 տողից 2166.9 հազար դրամն ուղղել 01.6.1 դասի 5112 հոդվածին
3) 01.1.1 դասի 4111 հոդվածից 108.0 հազար դրամ ուղղել 01.1.1 դասի 4112 հոդվածին
4) 01.1.1 դասի 4111 հոդվածից 20.0 հազար դրամ 01.1.1 դասի 4261 հոդվածին
5) 04.9.1 դասի 8411 հոդվածից 2981.4 հազար դրամ ուղղել 01.6.1 դասի 5112 հոդվածին
6) 01.1.1 դասի 4111 հոդվածից 142.0 հազար դրամ ուղղել 01.1.1 դասի 4112 հոդվածին
7) 01.1.1 դասի 4221 հոդվածից 22.0 հազար դրամ ուղղել 01.1.1 դասի 4112 հոդվածին

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կողբավան համայնքի 25 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 11 նիստի 35-Ն որոշմամբ հաստատված Կողբավան համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Կողբավան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Կողբավան համայնքի 25 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 11 նիստի 35-Ն որոշմամբ հաստատված Կողբավան համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Կողբավան համայնքի ավագանու որոշման նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ անվանման մեջ անհրաժեշտ է նշում կատարել ներկայացված իրավական ակտի բնույթի վերաբերյալ: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ և 19-րդ հոդվածների պահանջներից:

2. Նախագծի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ նախագծի վերնագրում անհրաժեշտ է նշել այն իրավական ակտի կրճատ անվանումը, որում նախատեսվում է կատարել համապատասխան փոփոխությունները: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ և 18-րդ հոդվածների պահանջներից:

Մասնավորապես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ հոդվածի համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:

3. Նախագծի 1-ին կետում անհրաժեշտ է նշել նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջների, որոնց համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը

(տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:

4. Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նախագիծը հիմնավորման հետ մեկտեղ փորձաքննության են ուղարկում համապատասխան ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ Կառավարության անդամը, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:

Վերոգրյալ կարգավորումների համադրված և բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:

Այսինքն՝ համայնքների բյուջեներում կատարվող ցանկացած փոփոխության ժամանակ անհրաժեշտ է նախագծի հիմնավորման մեջ հստակ նշել, թե ինչ ուղղություններով և ինչ նպատակով են ավելացվում կամ նվազեցվում բյուջեի ծախսերը:

ՀՀ ԱՆ իրավական ակտերի
փորձաքննության գործակալության պետ՝

Արդարադատության
Նախարարություն

11/13/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ